Վահան Տերյան

Ուշացած սեր

Բուքն է լալիս. հողմ ու ձյուն,
Մառախուղ է և մշուշ.
Ո՞վ է անվերջ հեծեծում,
Ո՞վ է կանչում այսպես ուշ:

Ո՞վ է շրջում անդադար,
Ու՞մ է կանչում հիմա նա,
Ես հեռու եմ, ես օտար,
Ասացե՛ք՝ թող հեռանա...

Ասացե՛ք՝ թող հեռանա.
Թող մոռանա ինձ հավետ,
Անդարձություն է հիմա,
Չկա դարձի արահետ:

Մեկը կորած շիրմիս մոտ
Հեկեկում է և երգում.
Ո՞ւմ լացն է այն, ո՞ւմ ցավոտ
Երգն է ճերմակ մրրկում...

Իմ շիրիմը հեռավոր,
Ե՛վ մոռացված, և՛ մենակ,
Ո՞վ է հուզում մենավոր

Իր թախիծով շարունակ:

Օտար երկրի դաշտերում,
Ցուրտ գիշերում ձմեռվա
Ո՞վ է անքուն դեգերում,
Անվերջ սգում իմ վրա....